



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի  
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սու Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, Էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ

«13» սեպտեմբերի 2022 թվականի N 75-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023- 2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը՝ համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

#### **Համայնքային բյուջեների ՄԺԾ ոլորտային գերակայությունները**

Գերակայությունները որոշվում են ինչպես համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ **Հայաստանի Հանրապետության ծրագրերի առաջնահերթ ուղղությունների հիման վրա, որոնք արտացոլվում են Հայաստանի նախարարության կողմից մշակված համայնքների առաջիկա տարվա բյուջետային հայտերի կազմման պարտադիր և խորհրդատվական մեթոդական ցուցումներում և ուղեցույցներում:**

Սոցիալ-մշակութային ոլորտներում կարևորվում են ծախսային հետևյալ գերակայությունները.

- առողջապահության ոլորտում՝ առողջապահական օբյեկտների հիմնանորոգում, առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների, գույքի և դեղագործական ապրանքների ձեռքբերում,

- սոցիալական ապահովության բնագավառում շարունակվում են առանձնակի ուղարկության կենտրոնում պահվել անապահով ընտանիքների, թոշակառուների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության և հաշմանդամների լուծում պահանջող խնդիրները,

- կրթության բնագավառում պահպանվում են նախադպրոցական կրթության բարեփոխումների շարունակական ընթացքը, առանձնակի ուղարկություն է դարձվում նախադպրոցական կրթարանների դաստիարակների աշխատավարձերի բարձրացման, նրանց վերապատրաստման և նախակրթարանների նյութատեխնիկական հագեցվածութ-

յան հաղցերին: Շարունակվում է պետության կողմից կրթության ոլորտի պատվիրակված լիազորությունների իրականացումը:

Կարեւորվում է համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, տուն-թանգարանների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները:

Համայնքային կառավարման ոլորտում իրականացվում են համայնքային ծառայության կատարելագործման, տեխնիկական վերազինմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև համայնքային ծառայողների անձնակազմի կարողությունների զարգացումը:

Տնտեսության ոլորտում շարունակվում են ներդրումները ճանապարհային տրանսպորտի, առևտուրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում):

Բնապահպանության բնագավառում կարեւորվում են աղբահանության և սանիտարական մաքրման, այդ թվում՝ անօրինական աղբանոցների վերացման, ինչպես նաև թափոնների կառավարման գործընթացների և միջոցառումների ու ենթածրագրերի, տարածքների կանաչապատման, բնապահպանական այլ միջոցառումների իրականացումը:

Տրանսպորտի և կապի բնագավառում իրականացվելիք ծախսային քաղաքականության հիմնական գերակայություններն են ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգումը և լուսավորությունը,

Տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունն է գյուղատնտեսության, տեղական զբոսաշրջության և էկոտուրիզմի զարգացման, արևային էներգիայով աշխատող օբյեկտների կառուցման միջոցառումների իրականացումը:

Քաղաքաշինության բնագավառի քաղաքականության հիմնական ուղղություններն ու ծախսային գերակայություններն են.

-համայնքների բարեկարգման, բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի ամրացման կամ նոր շենքերի կառուցման, անօթևան մնացած քաղաքացիների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, քաղաքային համայնքներում ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը :

Անշարժ գույքի կադաստրի բնագավառի գերակա ուղղությունն է դիտվում հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը<sup>1</sup>:

ՄԺԾ գործընթացի արդյունքում սահմանվել են.

- **Երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները** կամ նպատակները այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են համայնքային բյուջեների եկամուտները, ծախսերը (վարչական և ֆոնդային) և պակասուրդի մակարդակը:

- **Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները:**

Հաշվի առնելով երկարաժամկետ հարկաբյուջետային քաղաքականության նպատակները, ակնկալվող եկամուտների մակարդակը և ծախսերի անհրաժեշտությունը՝ որոշվել են ընդհանուր ծախսերի մակարդակը (և, հետևաբար, պակասուրդը) առաջիկա բյուջետային տարվա և ՄԺԾ ժամանակահատվածի հաջորդ երկու տարիների համար:

- Ռազմավարական ծախսային գերակայությունները. ՄԺԾՇ գործընթացում ոլորտային և ծախսային գերակայությունների սահմանումը թույլ կտա, որպեսզի առաջիկա տարվա համայնքային բյուջեի նախագծի կազմման գործընթացն ուղղորդվի համապատասխան մշակված ռազմավարությունների դաշտով:

Համայնքի ավագանիներ.

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

Աքրահամյան Հրահատ

Մարիկյան Հայկ

Գրիգորյան Արմեն Փ.

Բաղդասարյան Անուշ

Դավթյան Արմեն

Գագինյան Ալոն

Պապյան Լևոն

Նազարյան Սյուզաննա

Կիրակոսյան Զոն

Զովհիակյան Արմեն

Հակոբյան Վանն

Հակոբյան Արծրուն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



Տ. Խեց